

ՅԱԽԵԼՈՒԱԾ՝ „ԱՐԱՐԱՏԻ” 1903 թ. ՅՈՒՆՈՒԱՐ.

ՀԱՆԴԻՍ ՄՐՅՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԵՐՈՅ ԼՅՈՍԱԿՈՐՉԻՆ.*

Սուրբ հայրապետն մեր Լուսաւորիչն Դրիգոր, յետ
լուսաւորելոյն զհայս և զորս յայլազգեաց՝ շինեաց եկե-
զեցիս և կարգեաց եպիսկոպոսունս և քահանայս աւելի
քան դ.ձ., և եպիսկոպոսունս և այլ բազում՝ քահանայս
և սարկաւագունս: Զեռնագրեաց և զսուրբն Ըստակէս,
զկրսեր որդին իւր յաթոռն իւր և ինքն գնաց յանապատն
առ սուրբն Անտոն և Կրաւնիդէս ի վանս Գլակայ, զոր
յանուն սուրբ Կարապետին շինեալ էր նա և եղեալ անդ-
զնշմարս նորա: Եւ նոքա ոչ ետուն նմա թոյլ անդ կեալ,
այլ ասեն թէ՝ երթ գնաց յայլ խորագոյն անապատ, զի
մի առաւել փառաւորեսցիս ի մարդկանէ: Եւ նա գնաց
ի Սեպուհ լեառն՝ յայրն Մանեայ և յայլ անընակ տե-
ղին, և կեցեալ անդ ամս բազումս խօսածարակ և ան-
յայտ ի մարդկանէ: Եւ անդ դայ վաղճան կենաց նորա
ի փարուած գիտ միոյ, և մնաց այնպէս զբազում ժամա-
նակս: Եւ ապա գտեալ զնա հովուացն և ոչ գիտացեալ,
թէ ով ոք իցէ, և քարակոյտ արարեալ ի վերայ նորա: Եւ
մնաց այնպէս ամս բազում՝ անտես ի մարդկանէ: Եւ յետ
բազում ժամանակաց երեեալ ճգնաւորի ումեմն, որոյ անունն
էր Գառնիկ: Եւ նա առեալ զնշմարս սրբոյն Դրիգորի և
տարեալ եղ մեծաւ պատուով ի թորդան: Եւ լուեալ բա-
րեպաշտ կայսրն Զենոն և յղեալ տարաւ զբոլոր մարմին
մեր Լուսաւորչին ի Կոստանդնուպալիս, թողեալ Հայոց
զաջն ի պարծանս մեր, և զի ինքն զնոյն կամեցաւ:

* Զեռագեր Յայտմաւութք հ. 1499, էջ 83. նոյն պատմու-
թիւնը աննշան տարբերութիւններով հ. 1487 և այլ ձեռադրնե-
րում:

*Եւ ապա այնուհետեւ այլ ոչ երկեցաւ մարդկան սուրբն Գրիգոր, այլ շրջեր մեծաւ ճգնութեամբ ի լերինս՝ անտես յամենեցունց, և ի լերինն Դարազանեաց կեցեալ, ի փորուածը գիոյ ժամանակս ինչ, նոյնպէս և յայրն Մանեայ՝ որ ի նմին լերինն, ուր, և եղև վերափոխումն նորա յաշխարհէս առ Քրիստոս, անդիտելի ի մարդկանէ: Բայց յետ ժամանակաց դտեալ հովուաց ումանց զմարմին սրբոյն Գրիգորի և թաղեցին ի նմին տեղւո՞յ կուտելով քարինս ի վերայ նուրա, ոչ գիտելով թէ ով իցէ: Եւ եկաց անդիտելի մարմին նորա՝ ըստ թաղելոյ հովուացն, մինչև ի ժամանակս Զենոնի կայսերն Յունաց: Իսկ յաւուրս նորա յայտնեցաւ ճգնաւորի միոջ, որոյ անունն էր Դառնիկ, որ ընակեալ էր ի Բասեն դաւասի, մերձ ի գեօղն Աւանկըթնոյ, և ասաց թէ՝ եկեալ հանցես զիս աստի և տարեալ թաղեցես ի Թորդան: Եւ նա արար նոյնպէս, և եղին պատուով յեկեղեցւոյն: Զոր լուեալ կայսերն Զենոնի առաքեաց և տարու զպատուական նշխարսն ի Կոստանդինուպաւլիս՝ մասն ինչ թողեալ ի տեղին, և զաջն պարզեեաց Հայոց: Եւ տարեալ եղ պատուով մեծաւ ընդ այլ բազմութիւն սրբոցն, որ ժողովեալ են անդ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:



* Այս հատուածը «Պատմութիւն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին» վերնագրով զբուածքի վերջաբանն է՝ արտադրուած հ. 934 ճառընտրեց, էջ 280 բ, նոյն պատմութիւնը գրտնուում է նաև հ. 2499, էջ 168, և ուրիշ ձեռագիրների մէջ՝ սահմատ տարբերութիւններով: Պատմողը նիկեոյ ժողովի մասին խօսելուց յետոյ շաբունակում է այսպէս.